ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
   Լուսինե Այվազյան
   ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
   ք.Բելգրադ, Սերբիայի Հանրապետություն
   2024թ. հունիսի 2-ից 7-ը

3. Հրավիրող կողմը.
   Համաշխարհային բանկ, PEMPAL ծրագրի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
   PEMPAL գանձապետական համագործակցության 2024թ. լիագումար նիստին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները
   - Գանձապետական միասնական հաշիվը Սերբիայի Հանրապետությունում
   - Դպրոցը, որպես գանձապետարանի հաճախորդ
   - Գանձապետական տվյալների օգտագործումը տարբեր նպատակներով

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
   Մասնակցում էին PEMPAL ծրագրի 18 երկրների, ինչպես նաև Համաշխարհային բանկի ընդհանուր թվով՝ 75 ներկայացուցիչներ:

   Քննարկված հարցերի շրջանակը հիմնականում առնչվում էր Գանձապետական միասնական հաշվին, գանձապետարանի հաճախորդներին և գանձապետական տվյալները օգտագործելու հնարավոր շրջանակներին:

   Ելույթ ունեցան Համաշխարհային բանկի փորձագետ Մարկ Սիլինսը և Չեմ Դեները, ինչպես նաև ելույթներով հանդես եկան Սերբիայի, Ինդոնեզիայի, Կորեայի, Ղրղզստանի և Ղազախստանի ներկայացուցիչները:

   Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո հարցեր տալու հնարավորություն էր ընձեռվում և արդյունքում կազմակերպվում էին կարճ քննարկումներ:

Միջոցառման 2-րդ և 3-րդ օրերի ընթացքում կազմակերպվել են նաև փոքր խմբերով քննարկումներ՝ յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ներկայացնելով գանձապետական միասնական հաշվի առաձնահատկությունները:

Նշված օրերին մեր կողմից ներկայացվել է Հայաստանում վարվող գանձապետական միասնական հաշիվը, հաշվի շրջանակների ընդլայնման պատմական ակնարկը, հաշվի ներքո ընդգրկված միջոցները և դրանց օգտագործման հնարավորությունները և սահմանափակումները: Ներկայացվել է նաև Ինտերակտիվ բյուջե համակարգը և պետական վճարումների էլեկտրոնային համակարգը: Ներկայացնելուց հետո պատասխանել եմ մասնակիցների հարցերին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համեմատվել են համաժողովին մասնակից երկրներում վարվող գանձապետական միասնական հաշվի առաձնահատկությունները:

Ընդհանուրից առանձնացվել են Հայաստանում շահագործվող Ինտերակտիվ բյուջե համակարգի և պետական վճարումների էլեկտրոնային համակարգի հնարավորությունները: Մասնակիցները հետաքրքրված էին նաև Հայաստանի գանձապետարանի հաճախորդների լայն շրջանակով, ինչպես նաև դպրոցը ՀՀ-ում ՊՈԱԿ հանդիսանալու հանգամանքով:

PEMPAL ծրագրի՝ հաջորդ տարիների աշխատանքները կազմակերպելու, հիմնական միտումներն ու հետաքրքրությունները պարզելու նպատակով՝ միջոցառման վերջին օրվա ընթացքում մասնակիցներին ներկայացվել է հարցաշար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ հարցաշարի արդյունքներով ծրագրել հաջորդ տարվա քննարկումները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախորդ կետում նշված Հարցաշարի շրջանակներում, հետագայում ուսումնասիրելու նպատակով, առանձնացվել է արհեստական բանականության կիրառման փորձը՝ Կորեայի գանձապետարանում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

11.06.2024թ.